


Ամբաս Բիւրո
Խմբագրութիւն «Փիիւն»
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Ղ.բ.ս.
ՏԱՐԵԿԱՆ... 15
Վ.ԵՅԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է



Փ Ի Ի Ն Ն Ի Կ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
Վ.ԵՅԱՄՍԵԱՅ 8
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6



Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Բ Թ

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐԻ

13 ՅՈՒՆԻՍ 1901

ԹԻԻ 6

Անկողնակալութեան առաջնորդումը
կը հրատարակենք հետեւեալ յօդուածը, զոր
ուղղած է խմբագրութեանս Օր. Մ. Պեյ-
շերեան:

ՄԻԱՆԻ Մ'ԱՌԹԻԻ

Կեանքի մէջ շատ մը ինչ տեսնու
ւոյթներ կան, որոնք անհունապէս կազ-
դեն ոչ միայն ժողովուրդի մը արտիճակ
եւ անոր բնատրոտութեանը վրայ: Յուսա-
խաբութիւնը մեծ է այդ ինչ տեսնու-
թեան, եւ չկայ կեանքի մէջ այնքան
ժայռայեղօրէն դառն սանջանք, մանա-
ւա՛նդ զգայուն բնատրոտութիւններու հա-
մար՝ որքան յուսախաբութեան յաւազ
եկած սանջանք:

Գեղացոյցն հաւաստի անկումը, այդ
Սրբութեան՝ ցեխերու մէջ այնքան վայ-
րեօրէն լլկուիլը, շատ անգամ չմահա-
ցներ զուրկ ժողովուրդ մը ճիզիմապէս.
բայց Սրբի մահը, բարոյական կեանքի
մահը կուսայ անոր անվրէպ: Որքան
բարձր ըլլայ ժողովուրդ մը, որքան ազ-
նի անկողնակալութեան համար խորհուած

իւր մեծ հաւաստի մէջ կը խաբուի՝ սա-
կաւ առ սակաւ, անգիտակցօրէն զուրկ
կը կորսնցունէ մասնիկ առ մասնիկ այն
ազնիւ յասկութիւններէն՝ որոնք անուս-
ման յարգանք, պիտի ըսեն նոյն իսկ
պաշտօնի մօտ հիացում ներշնչած էին
ասեմ մը: Եւ ժամանակի ընթացքին
մէջ, հետզհետէ օր մ'ալ կը տեսնու ցած
ինկած իր բարոյական բարձրութեան,
բարձր հասարակ, անզգալաբար, եւ
իւր անկումն պաշտօնը ուրիշ բան չէ՝
բայց եթէ պղծուիլը՝ իր մեծ Հաւա-
ստի... Միջավայրը կը փոխէ զմարդիկ,
կամ եթէ չյաջողի փոխել իսկ, խորա-
պէս կազդէ մեր մտքին ու արտիճակ
վրայ: ասիկայ ինչու նեղարտութիւն մ'է. եւ
միջավայրը՝ որ այսօր կը օրհաստ
հայ ժողովուրդը, բոլորովին ինկած ու
վաճակած բնութիւն մը ունի. հոն կը տի-
րապետեն անմարմալ Ստոյիներ, Կեղ-
ծատրոտութիւնը, Խարդախութիւնը, Յա-
ծութիւնը...:

Այս ինչ խորհրդածութիւնները
ընելու առիթ տուա ինձ «Առաւելոյ»
2316 Յալիս ամսաթուոյն մէջ «Վերջա-
նակ Գաղտնի»-ն համար խորհուած

մէկ առաջնորդող յօդուածս Պ. ստորագրութեամբ:

Այդ յօդուածը գրուած այնպէս զգացմամբ եւ վառ շեշտով, իրեն աւելուցնուց համոյալի սպաւորութիւնը քողոց եւ ի՛նչ վրայ, բայց պարտէ կը համարիմ յօդուածին վերջին մասին համար իմ դիտողութիւններս յայտնել, վասն զի մենք խնայողութիւնս, յօդուածագիրներս, որ կոչուած են ժողովուրդի մը բարայական կեանքի առաջնորդներն ըլլալու նշանակումս ու սուր իրենց իսկական գայներով աւելուցնելու, մեր ամենէն նուիրական ու սուրբ պատգամներս ինքնին է ուրեմն. *ուրբար եւ անախտ ըլլալ* . . . Բայց ըստնել մեր բարձր կոչման եւ սանձնած ահաւոր պատգամներս գիտակցութիւնը, եւ չարաչար չգործածել ժողովուրդին այն միտմտեղէն գեղեցիկ ու վեհ Հաւատք՝ որ ունի դէպի մեզ. վասն զի եթէ նա յուսաւոր ըլլայ՝ յոյսնալ կը դառնայ, յոյսնալ կը զարթոյնայ մը երբ կը կորսնցան Մեծ ու Սուրբ բաներն հաւատքը. ինկած ժողովուրդ մ'է արդէն, եւ ո՛ր է պատգամներսն . . .

«Յօդուած» չկրնաւ — կըսէ յարգելի յօդուածագիրը — պարտէ կը համարիմ շեշտով յայտնելու «Մեծապաշտ» Տեառնն եւ գործոյնս սպասելի, Տեառնն թաւառանք, որ իր թերթովը ծանուցելու գրաւորով լինելով համոյեմ, ըստ կարելոյն փայլ եւ խնամք չէ գրուած ընթացողին ձեռքը սպասուածն եւ փայլուն հասարակ մը մեծ հաւատով սպասուած, եւ ինչ որ անգիտակցութիւն ծանուցողութիւն մ'է՝ ամբողջ ազգութեան, Հայրիկին փառաւոր կենդանագրով պնեւագարուած»։ Գրեցի թէ ազգի յօդուածագիրը տեղեկ չէ մօտէն «Վերջապաշտ Չայներ»ուն հրատարակման պատգամները. որովհետեւ այնպէս ազնուորէն գործի մը կամ գաղափարի մը մեծութիւնը ըստնելու անհամարութիւն մը՝ գիտակցորէն *անախտ մը իրեն ուրիշ տեսիլ հրատարակելու* եւ ամենայն պարտէ

գային թերթի մը մէջ . . .

Տեառնն թաւառանք «Վերջապաշտ Չայներ»ուն հրատարակման խնդրոյն մէջ անեցած է այն դերը՝ ինչ որ պիտի ունենար սովորական սպասուածքէ մը վեհ. Հայրիկին փառաւոր կենդանագիրը որ ինչպէս կըսէ Պարան Պ. «անգիտակցութիւն ծանուցողութիւն մ'է ազգութեան» պատգամն է գեղեցիկ վարպետը, մեր ծախմով. թողթի եւ սպասուածքի ծախմերը դարձեալ եղած են մեր միջոցներով, եւ եթէ այդ միջոցները ստեղծուելուն մէջ դեր մը ունեցած է Պ. թաւառանք, այդ ալ սակ վաճառականական հասարակութիւնը բնութիւնը ունի, որով պիտի տեսնուին որոշեալ ծանուցողութիւններ մէջ. Գալով զբի շարունակու՛ն այդ գործը յանձն առած էր, մեր ամենէն մօտիկ բարեկամ, Պ. Կարապետ Սյվազեանց, եւ եթէ կայ մէկը՝ զոր պէտք է իրաւամբ շեշտուող հրատարակու, դա՛ այդ երեսասարդն է, որ առանց ու եւ է նկատման, առանց ու եւ է ներքինական կամ բարայական անկալութեան, այդ գործը յանձն առաւ *անհամարաւոր*, հազար չարաչարութեանով, զորս չեմ ուզեր հասնի առ մի քանի չմտաւորելու համար իր համեստութիւնը։ Մակ ի սէր Գործին, որոյ բարձրութիւնը եւ օգտակարութիւնը ընթացողներէն անպակաս եղած էր, եւ ինչպէս նուիրած Սեպ, նա՛ թողած արդէն գրաւորական արտեսքը, կը պատգամներ արդէն նա արտեսքի մը պարտաւոր. երբ «Մեծապաշտ» հրատարակման լարը առաւ։ Այդ պահուն նա իր անհամարական ծրագրերը եւ քողոց, ծանուցողի մը համար, եւ ուղեց ինքն շարունակու էր «Մեծապաշտ» . . .

Այս պատգամները գոցէ անդադրէր. բայց կողմն ցայց սալ թէ՛ «անգիտակցութիւն» անպակաս անկալ յարմար էր Պարան Սյվազեանի Գործին . . . Արդար ըլլալու համար պէտք է դարձեալ խոսակցել թէ՛ Պարան Կարապետ Սյվազեանց «Վերջապաշտ Չայներ»ուն գործը կենար սառ կամ անհամարանք օրէն վերջացնելու . . .

բաւեան իր «Արեալոյս»ի գրագումներէն բան մը գտնած էր մեզի: ընդհակառակը, Պ. Ս. յիշատակեցի էր որ շատ անգամ իր գործը բողոքած դարձեալ անձնութիւնս, եւ այս՝ ի սէր մեզ համար բարձր բարեկամութեան, կողմէր եւ «Արեալոյս»ին շարունակում: Եւ այդ պատճառաւ ալ հազիւ գիրք ստարեցաւ 25 օրէն...:

Նքէ Պարոն Պ. առիթ տաւ չըլլար, այս տղերք աւելորդ պիտի համարէի գրել, բայց ուրախ եմ որ տեսցաւ այդ առիթը, որով ես ալ կուգամ «Փիւնիկ»ի միջոցաւ հրատարակելու յայտնել մեր տեսազիմ շնորհակալութիւնները իր անխնայ ջանքերուն եւ գովազդութիւններուն համար բարեկամներուն է՛ն ազնիւին եւ է՛ն անձնութիւնս:

ԽՍՈՒ

Ապետանդրիա 10 Յուլիս

ՀԱՅ ԿԻՆՈ ԱՐԴԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շար. Ե. քիւն եւ վերջ)

Արի՛ կիներ սրանք կը քաջալերեն, կազմակերպեն, կուսի կը պատրաստեն իրենց ամուսինները, զաւակները, եղբայրները... մէկ կողմէն արիւնտ կուրծքերու վրայ վերակապեր կը դնեն, միւս կողմէն հոգեւարձութիւն վերջին շունչը կ'ընդունին, անգին իրենց ձեռքերով պատերազմի, այսինքն մահուան կը զրկեն իրենց սիրելիները, եւ արտասուք չ'ունեն, վասն զի անոնք մեզնէ շատ աւելի քաջ ըմբռնած են մահուան գիտակցութիւնը, և համոզուած են թէ՛ գիտակցօրէն ընդունուած մահը՝ խոստացուած Անմահութիւն է... Ըսել է ուրեմն թէ՛ ամեն դարերու և ամեն ժամանակներու մէջ երբ առիթը ներկայացեր է, կամ աւելի ճիշդը, ներկայացուցեր են, կիներ ունեցեր է որոշ

կեանքի սահմանին մէջ՝ որը այնքան անձուկ է, այլ և գուրսը... կրօնական, պատերազմական, քաղաքական, ընկերական, յեղափոխական: մէկ խօսքով այն ամեն կնճռոտ, գժուարին խորհրդաւոր հարցերու, խնդիրներու, և դարձերու առթիւ, որոնք շատ անգամ ամբողջ ազգերու և ժողովուրդներու ճակատագիրը կը վճեն...:

Դարձեալ եթէ թղթատենք հին և նոր ժամանակներու պատմութիւնները, պիտի տեսնենք որ ամեն անգամ երբ կիներ ս եւ է կերպով գեր ունեցեր է աշխարհի վրայ անցած դարձած դէպքերու եւ պաշտօններու մէջ, անոր մասնակցութիւնը և գործունէութիւնը, միշտ փրկարար արդիւնք մը դուրս բերած է: Հրէից պատմութիւնը ի միջի այլոց մեզ կը ներկայացնէ Նոթեր մը, որ Սաւեբոսի վրայ իր ազգեցութեամբ ժայռէ սիրտ մը ի գուծ շարժած, հա՛նուր ազգը անհրաւ և սարսափելի մահուանէ մը փրկած, և շարին՝ իր արժանաւոր պատիժը կրել տուած է:

Կը տեսնենք Յուդիթ մը, որ դարձեալ իր ազգին սիրոյն, Հողեփեռնէս մը իր ազգեցութեան տակ առած, ապա իր ձեռքերով գլխատած է զայն և իրեն շնորհիւ Հրէայ ժողովուրդը անգամ մ'ալ ազատած է բզնաւորներու ճանկերէն...:

Մեր Աղբ. Պատմութեան մէջ Սանտրիոյ օրերը մղուած կրօնական ամենախիստ հալածանքներու ատեն, կը տեսնենք տկար կոյս մը, Սանդուխտը, որ ինքը մի'ս մինակ իր փառաւոր նահատակութեամբ ըրաւ՝ թերևս ինչ որ հարիւրաւոր նահատակներ չկրցան ընել, այսինքն հիմն ի վեր յեղաշրջել հանուր Հայաստանի կրօնական դադափարները և միայն իր գաւանած Գրիստոնէական կրօնը յաղթող հանդիսացնել երկրին վրայ: Տրդատի օրերը դարձեալ կը տեսնենք տկար կոյս մը, Հովիտիմէն, որ իր անմեղութենէն ուրիշ զէնք չունէր, և սակայն խորտակեց փշրեց անպարտելի թագաւորին կամբը... փճա-

կարգը իջեցուց այն դիւցազնը որը Հռու-
չէի պէս հսկաներ իր ոտքերուն տակ
տապալներ էր. . . Օրինակները այնքան
չատ են զորս մի առ մի հոս թուելը
երկար կըլլայ:

Մէկգի թողլով ուրեմն ժան տ'Առ-
քերը, Շառլօթ Քոռտայերը, պիտի յի-
շեմ միայն Ա. Մեշիկացի Տիկին Հէնրի
Պիչըր Սթօն, որը իր Աղբար Թոմասի
անկողի, դուժէ ու ցաւէ դողացուց
աւրոյժ քաղաքակրթեալ մարդկու-
թիւնը եւ գերեզմանութիւնը վեր-
ցուց: Արդեօք քանինե՞ր իրմէ առաջ
աշխատած, գրած խօսած էին այդ հրէ-
չային արարքին դէմ, և սակայն կնոջ
մ'զգայուն գրիչը յաղթանակը տարաւ
վերջապէս. . . և ո՞վ կրնայ ուրանալ. . .
կինը այն հրաշալի զսպանակն է, որը
կը մղէ յառաջ. նա գերագոյն զօրու-
թիւնն է, որը կը դնէ զմարդիկ բարո-
յական այնպիսի բարձրութեան վրայ,
զոր չեն համարձակիր յուսալ իսկ. . .

Այս վերև յիշուած օրինակները
հինն. սակայն կնոջ՝ հզօր ազդեցու-
թիւնը չերեւցա՞ւ միթէ նոյնիսկ վերջի
ժամանակներու մէջ: Կիւլիւզարի մը
դիւցազնական դիմադրութիւնը և կրած
սարսափելի չարչարանքները ազգ. յե-
ղափոխութեան առաջին կայծը եղան,
որը տակաւ առ տակաւ վառեց հրդե-
հեց հանուր ազգը: Սաանոյ մէջ Շաքէ մը
իր հերոսական մահուամբ իր և իրեն-
ներուն արեան վրէժը կտակեց հայ ժո-
ղովուրդին. . . սադին՝ վասպուրականի
մէջ Սերոր բաշայի մը կինը իր կոշիւն-
ները չորս կողմը առած, առիւծ էր-
կանը կողքին զէն ի ձեռին կռուեցաւ. . .
Սերոր ինկաւ, ինքը շարունակեց դիւ-
ցազնի կռիւր, մինչև վերջը. . . Շատե՛ր
մեռան. . . շատե՛ր սպաննուեցան փա-
ռաւոր կռիւներու մէջ, սակայն ատոնց
մահը չունեցաւ այն ազդեցութիւնը ինչ
որ, Շաքէներու մահը, Կիւլիւզարներու
եւ Սօսիններու դիւցազնութիւնը ըրաւ
հայ ժողովուրդին մտքին ու սրտին
վրայ. . . Սակայն եթէ կնոջ բացարձակ
ազդեցութիւնը կրնդունինք, անկախ

նակ թէ, ինչքան բարի, նոյնքան ալ
վնասակար հեռուութիւններ կրնայ ու-
նենալ ատիկայ եթէ ի չարին գործած-
ուի. . . Սմուր բարոյական մը, առողջ
դաստիարակութիւն մը բաւ է տալու
կնոջ ազդեցութեան այն բարի և աղ-
նիւ յատկութիւնները, որոնք մարդկա-
յին ընկերութեան վրայ պիտի ունենան
բարերար ներգործութիւն. . . Այսու
հանդերձ եթէ դարձեալ երբեմն թու-
լութիւններ կերևան իր վրայ, եթէ
զուրկ է ամուր նկարագրէ և առողջ
կամքէ, ատոր մէջ ինքը, իր խառ-
նուածքը կամ իր բնութիւնը չէ՛ յան-
ցաւորը. . .

Ստեղծելով կնոջ համար գերու-
թեան ստորնացնող կեանքը, կոյր հպա-
տակութեան և բռնի հնազանդութեան
փճացնող վիճակը և նկատելով զանի-
կայ իբրև շնչաւոր առարկայ մը սոսկ
մարդոց հաճոյքին ու պէտքերուն հա-
մար ստեղծուած, անոր հոգւոյն մէջ
մեռցուցին ինքնաճանաչութեան, իր
անձի գիտակցութեան և արժանապա-
տութեան վսեմ զգացումները. եւ
կինը մի՛շտ ենթակայ դաշաւոր ճնշում-
ներու, սկսաւ ինքն ալ կամաց կամաց
հաւատալ թէ՛ բնութիւնը կամարարչու-
թիւնը զինքը ստրուկ է ստեղծեր, թէ՛
ինքը դատապարտուած է յաւիտեան
ստրուկ ապրելու:

Հին անձանօթ ժամանակներէ ի
վեր ուրիշներու կամքին ու քմահաճոյք-
ներուն տեղի տալու վարժուած՝ իր
հոգւոյն մէջը չէ կրցեր բոյն դնել կամ-
քի այն սքանչելի ուժը՝ որ վսեմ նկա-
րագրի մը խմորը կը կաղմէ և որոյ դէմ
ամենէն անյաղթելի կարծուած աշ-
դեւքները եւ ամենէն ամուր ենթադ-
րուած ուժերը ապակիի պէս կը փըշ-
րուին. այդ է անձ՝ իսկական պատ-
ճառը որ նա յողզողը, վարանոտ, փո-
փոխամիտ կըլլայ շատ անդամ զանազան
խնդիրներու մէջ:

Ուրիշներու կարծիքները ու դա-
ղափարները ընդունելու և իւրացնելու
սովորած՝ ինքը անկախ միտք, ազատ

փառքներ չէ ունեցեր մինչև ցարդ եւ այսպէս հանրային կարծիքը կաշկանդելով կինը իր մտածումներուն եւ զգացումներուն մէջ՝ անոր բարոյական կեանքի մակարդակը զգալի կերպով ցածրուց։ Նա սովորեցաւ կեղծել եւ սքանչելապէս յաջողեցաւ։ Եթէ կը սիրէր՝ այդ սէրը թաղեց իր հոգւոյն ու սրտին ամենէն խորունկ ծալքերուն տակ իբրև արատ մը բարոյականի դէմ, իբրև դաւաճանութիւն մը պատուոյ սկզբունքներուն դէմ, իբրև ընդունուած սրբապղծութիւն մը ոճիր մը վերջապէս։

«Ի՞նչ պիտի ըսեն» ի մտածումը կնոջ ամենէն մեծ սարսափն ու արհաւիրքը եղած է միշտ. նա կը սոսկայ հանրային կարծիքէն, ինչպէս մարդ կը սոսկայ կախաղանէն։

Երբեմն կը տեսնես աչքերը կը փայլին, սիրտը կը բարբախէ, բերանը կէս մը կը բացուի խօսելու, ազատ սպարէլ տալու իր ներքին հոգեկան աշխարհին մէջ յուզուող ու եռացող զգացումներու բուռն հոսանքին, և սակայն ինքզինքը կը զսպէ. հո՛ն է հանրութիւնը որ շարուած ուշադրութեամբ մէկիկ մէկիկ կը կշռէ, կը վերլուծէ իր իւրաքանչիւր խօսքը, աչքերը չորս բացած կը քննէ իր ամեն մէկ աշարքը, ամեն մէկ շարժումը, դէմքին խաղերն իսկ կը զննէ, կուզէ թափանցել անոր մտածումներուն մինչև խորերը. և շատ անգամ ինչ որ չտեսներ կը կարծէ դուշակել, եւ այդ առանց կարմրելու իբրեւ ճշմարտութիւն հրապարակ կը հանէ, Անպատկառ հետաքրքրութեամբ կուզէ կամ աւելի ճիշդը կը տեսչայ անոր հոգւոյն ու սրտին ամենէն գաղտուկ խորշերն ալ քրքրել զննել, եւ վա՛յ այն կնոջ որ անխոհեմ քայլ մ'առնելով կանկամանքի տեղի կուտայ. նա դատապարտուած է արդէն՝ անողորմ ու սարսափելի վճռով։

Հանրութեան կարծիքը Տամբլէսի սուրն է, որ սպառնալից կախուած է միշտ իր գլխուն վերև։ Սա-

րում կինը վերջապէս առողջ և հիմնական դատախաչակութեամբ լուսաւորուած ու զօրացած, պիտի կատրտէ այն անտանելի շղթաները՝ որով նախապաշարեալ հանրութիւն մը կը կաշկանդէ իր ամեն նուիրական ու սուրբ իրաւունքները, այն ատեն ցոյց պիտի տայ իր մտքի, սրտի, հոգւոյ բոլոր թագուն իրաւունքները. . .


Ֆլամարիօն կըսէ թէ մեր երկրին դրացի «Մարս» մոլորակին մէջ ազդող մարդկութիւնը, ամեն բանի մէջ նախապատուութիւնը տուած է կնոջ, թէ հոն՝ կինը շատ աւելի գերազանց կը նկատուի այդ մարդէն ամեն տեսակէտներով։ Ի հարկէ չգիտենք թէ ո՞ր աստիճան ստոյգ է այդ ենթադրութիւնը, միայն թէ մեզ համար ուրախալի է ոչ ֆլամարիօնի պէս մարդ մը արդէն համոզում դայացուցեր է կնոջ կոչման բարձրութեանը վրայ, ճանչցեր ու զնահատեր է անոր արժանիքները, և «Մարս»ի երևակայական մարդկութեան մէջ տուեր է անոր այն տեղը՝ զոր չունի հոս՝ երկրի վրայ. . .

Սակայն «Մարս»ը մեր երկրէն շատ աւելի ծեր, փարձառու, զարդացած ու նրբացած կենթադրուի. ս՞վ գիտէ, երբ մեր երկիրն ալ հասնի անոր տարիքին, ի՞նչ ճակատագիր կը վիճակուի մեզ՝ կանանցս համար. բայց այդ ապագան որքան յանկուցիչ այնքան ալ հեռաւոր է դժբաղդաւար, ատիկայ՝ մեզի յաջորդող բաղբաւոր սերունդներուն վերապահուած է։ Մենք ջանա՛նք ցարչափ կապրինք՝ մեր ներկայ այս անտանելի դրութիւնը բարւոքելու, որը շատ ալ դժուար չէ։

Լսենք միայն մեր խղճի ձայնին, նոյն իսկ եթէ աշխարհ մը բամբասանք ու մեղադրանք թափեն մեզ վրայ արհամարհենք չարամիտ պաշտաւանքները՝ որ մեր ականջները կը վիրաւորեն. խիղճը միշտ ճշմարիտը, Գեղեցիկը, Բարին կը թելագորէ մարդս Բարոյականի սրտը ու ճշմարիտ օրէնքները, սկզբունքները ծանօթ են մեզի, ատոնք

յաւէ՛տ մեզի համար: Բարձրացնենք մեր սեռը այն ստոր վիճակէն՝ որոյ են թարկուած է դարերէ ի վեր, հզօր զարկ մը տալով մասնաւորապէս մեր սեռին դատարարակութեան, ո՛ր դրժբաղդաբար շա՛տ թերի է, եւ աւելի երևութական քան իշական բնութիւն մը ունի: Ճանչնա՛նք մեր արժանապատուութիւնը, քա՛ջ ըմբռնենք մեր բարձր կոչման դիտակցութիւնը, դարձե՛նք աւուղ կամուրջ համազում եւէ՛ անաշտորդուած միայն, եւ մտնա՛նք հանրութեան կարծիքը:

ՄԱՌԻ



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Շար. Ե. քիւսն եւ վերջ)

Արդ, «Թիւնիկի» ընթերցողները հետեւելով «իւնյ կայսասեւեթ մեր առաջնորդներէն»ի, թող հետեին այն արդար բողոքին զոր կը բառնայ այսօր ժողովուրդը իր առաջնորդին, իր վարժարանին, իր եկեղեցիին, իր ընկերութիւններուն ու հաստատութիւններուն զորս թուած էր «Թիւնիկ»: Այս անվերջ շարքը խնդիրներու, որ միշտ խնդիր կը մնայ իր սիրտ հատցնող վիճակին մէջ, օգակ օղակ կուգայ շղթայուել ու բարդուիլ ազգային բաշմաշան ու ծանր ցուերուն՝ վրայ որոնց դարմանը գեւ կողասենք մեր Առաջնորդ Արշաղանէն՝ կրկնելով տարտամ յանկերգը՝ «Իրմէ՛ կողասենք»:

Սա վերջին օրերը ամալերլի հարցաքննութիւնը կը կատարուէր Գալուսեան երկսեռ վարժարանի, ամէն խղճամիտ և նախանձախնդիր այցելուի աչքին պիտի զարնէր անմիջապէս այնտեղ տիրող կարգն ու սարքը:

Առաջին տպաւորութիւնը ո՛ր անտանելի կերպով կիյնայ վրադ, վարժարանին սեմէն ներս օտք կոխելու առաջին վայրկեանէն է ո՛ր կսկի, իր նախնական ու գեղջկական ձեւովը, եւ եթէ կուզէք ո՛ր աւելի ճիշդ ըլլայ՝ մարդ

թուրք մէարէսէի մը մէջ կարծել, այն աստիճան ո՛ր տխուր է շէնքին ու կարասեաց վիճակը. անշուկ կը բուրէ:

Իրարանցում մը սրահէ սրահ, հապճեպ մը, «գոնթուռաթի» առնուած գործի մը պէս, այս եռանդամ շարժումը սակայն ընդհանուր անհոգութիւն մը կը բաշարկէ ի՞նչ մէջ ո՛ր կուգայ ուշուականանալ քննութեան միջոցին սեւ տախտակին առջև դաղդաջուն ու հարցումին հանդէպ շուտաշուտ կմկմացող աչակերտի մը ապշեցուցիչ վիճակովը: Աչակերտի մը ըսն, չէ՛, աչակերտներու կարգի մը որ իր 30ի 40ի թուին մէջ հազիւ 2-3 բացառութիւն կը կազմէ. ու այս տխուր իրողութիւնը՝ աւելի տխուր կը դառնայ՝ երբ ուսուցիչներու ոմանց մէջ ա՛լ չի պահուելու աստիճան անհանդուտութիւն մը զգալի կըլլայ. ամօթին ու խղճին անհանդուտութիւնը՝ ո՛ր իր ձեռքին տակ դաղացնել կուտայ ինչեք թափթփող դրօշը.:

Աւ ս՛րքան պիտի արգահատէիք խեղճին ալ՝ երբ իբր ուսուցիչ, իր չ՛ուսուսեալից ամէն օր մէկ ճիւղին դասերը խեղճ ու կրակ աւանդելէ յետոյ, հարցաքննութեան միջոցին ալ ճիւղ մ՛ունի. չուտող աչակերտին բերանը դնել բոլոր այն պատասխանները, որոնք հարցումի մը ձևը ունենալ կը թուին իրեն, քրննողն ալ ինք՝ քննուողն ալ ինք. . . Աստուած օղորմի այն յայտելուն որոնք կը կառչին Գալուսեան վարժարանէն ելլող հարաշատ սերունդէն, մանաւանդ ալ՝ գալին պատմութիւնը սերտոյններէն.:

Երկար պիտի ըլլար թուելը մի աւմի բոլոր այն երևույթները, որոնք ս՛չ միայն մշակույթին ու ժամանակին պահանջման հետ չեն հաշտուիր երբէք, այլ միանգամայն հոգին կը ցաւցեն. և մենք միտք չունինք աչքէն երկար բարակ մանրամասնութեանց վրայ ծանրանալու երբ քիչ թէ շատ ծանօթ է ամէն հետաքրքիր ու կշիտաւոր ընթերցողի, որոնք դիտակցաբար կը հետեին ու կը հետամտին ազգային զարգացման ու յառաջդիմութեան նախորդական գոր-

Տեղական թերթերը որ աչքերնին
կալ կալ բացած երբէք առիթ չեն
փակցնէր քննադատելու՝ այս անգամ
ալ քննութեան առթիւ նշուի ունեցան՝
«անբարոյսականութեան սահմանները»
զորս գծել առաջարկած էր պատ. հա-
գարարձուներէն մին՝ օրհորդի մը՝ որ
լուսութեամբ միայն պատասխանած է:
Հարցումը, որքան ալ կանխամտածու-
թեան մը արդիւնքը չըլլաւ, գոնէ շատ
կրտաբաշտ աւ շիտիեցուցիչ հարցում
մ'է, մեր օրհորդներուն համար որանք
բարոյսականութեան սահմաններն ան-
գամ չի չափելու համեստութիւնը ու-
նին, ու եթէ ինչչորը այնքան կարեւ-
որութիւն ստացաւ՝ չի պիտի արժէր թե-
րեւս, եթէ այդ հարցումը ընող Պ.
հոգաբարձուն պահանջած գիրքն ու
յարժարութիւնը ունենար այդ ծրագրէ
գուշտ բացառիկ շնորհարարութիւնը.
կրնգուցնէք, թէ ալ պէտք է անցած
ըլլայ հաճախներու էջէն: Ինչերու տի-
րապետութեան այլունդակ չըլանք. ու
մենք հիմայ սահմանադրապէս տեղ կա-
տանք ժողովուրդի ամէն գասակարգին
ալ իր կարողութեան չափով իր գերը
կատարելու արդարին գործերու մէջ,
սակայն այդ չի նշանակեր թէ՛ հանգի-
սազը իշարունք ունի իր չի հասկցած
ու իր ուժէն շատ վեր հոգեք ու պաշ-
տօններ ստանձնելու: Մարդոց փառա-
սիրութիւնը չի սահմանափակիր, բայց
քիչ մը համեստութիւն անհրաժեշտ է
գոնէ, որքան ալ բուն ըլլան մեր
ձգտումները:

Հակասական երևոյթ մը չէ՞ տես-
նել, Սեթեանի, Խնատեանի նման վեր-
ջապէս փորձ ու հմուտ ուսուցիչներու
կարգին ճերմակէն ձեռքին մէջ շարժուն
նստած մէկը՝ որ իր պաշտօնէն աւելի
իր շարժումներուն ու ձեւերուն հրապու-
րիչ ու ախրակցան ձև մը տարով կ'զբա-
ղի, ու երբեմն ալ առջիւ բացուող
գրէն հար մօտաւ հարցում մը նետելով
աշակեալուն: Մենք որ կը համոզանք
թէ ի՛նչ բոկ է գպացը և ի՛նչ բոկ է
գպրոցի մը հոգաբարձութիւնը, չենք

այն «չէվզէի» հովերն ու ձևերը որոնք
արամադրելի են միայն հարսնիքներու
ու միջազգային պարասրահներու մէջ,
ո՛չ թէ վարժարաններու սրահին մէջ.
չենք կրնար հանդուրժել որքան ալ
մարդու պակասութիւն ըլլայ:


Հրաման մը այս կողմ, ակնարկ մը
այն կողմ նետելը, սրահէ սրահ հող-
մահարը ձեռքը վազվզելը, չի նշանա-
կեր հոգաբարձութիւն. ո՛չ ալ քմահաճ
կարգադրութիւններ ու սնօրինութիւն-
ներ ընելը, որանք թէև չափազանց ե-
ռանգ մը կ'արտայայտեն, բայց ծիծաղ
ալ կը շարժեն միւսնայն ժամանակ, ու
առիթ կառտան որ ժողովուրդը ամեն
գործի մէջ միշտ բոկու բան մը ունե-
նայ, ու ահա այս բոլոր անխտրժ ու
գայթակղեցուցիչ երևոյթներուն պա-
տասխանատուութիւնը անխուսափելի-
օրէն կը ծանրանայ մեր Սրբազան Ա-
ռաջնորդին վրայ, որ ոչ միայն պար-
տաւոր էր բոլոր անհրաժեշտ ու պատ-
շաճ կարգադրութիւններն ընել ու ինք
անձամբ հսկել, ընդհակառակը թողուց
երեսի վրայ ու դեռայ Ալեքսանդրիա-
նու գեռ ի՞նչպէս խահեմութիւն կրնանք
սեպել լուելը, ծածկել վերքերը երբ
հեռոյհեռէ սպառնալից բնութիւն մը
կաննեն. . . ո՛չ, ո՛չ, քիչ մը կամք և քիչ
մ'ալ անձեռնիշուութիւն կը պահանջենք
մեր Սրբազան Առաջնորդէն ալ վերջ մը
տալու համար ժողովուրդին ցաւալին ու
արամադանական արտունջին՝ «Մինչև
հիմայ ի՞նչ ըրաւ»:

Սա արուր տաշերու կարգին հա-
ճայքով մը պիտի կարգան «Փիւնիկի»
ընթերցողները թէ՛ Գահիշէի Լաւրան-
կիթերցատունը, որ իր ետև աղվալի
ու գրեթէ ապարդիւն (1) անցեալ մը կը
թողու, ուրախ ենք բոկու թէ ամսոյս
Չին որ զուգարեպ էր Ազգ. Սահմանա-
դրութեան Տարեգարձին ալ, վերջապէս
հանգիստուր բացումը կը կատարէր,
ընդ նախադահութեամբ Սրբազան Ա-
ռաջնորդի և համակիր ազգայիններու
խուան բազմութեան ներկայութեամբ.
ոգ կարութիւնը ակնկալուած էն աւելի

այս արտասովոր ու համակրալիր վերաբերումը շատ քաջալերական պէտք է սեպել, հակառակ երբեմն իր անսարք բերութեան որ արգիւնքն է անշուշտ իր կրած յուսաբութիւններուն: Եւ մենք կը յուսանք այլևս թէ յարատեւ օրէն պիտի շարունակէ իր ընթացքը. այն անձնուէք շանքերու՝ չեղհիւ զոր չի խնայեր Գործ. Վարչութիւնը, ոյժ և կարողութիւն իրեն:

ՎԻՐԱԺ

Գահիրէ 29 Յունիս 1901




Աւրախութեամբ կ'իմանանք թէ՛ տեղւոյս Ազգ. վարժարանի Հոգաբարձութիւնը վերջապէս հաճած է, հրապարակային ընելու հարցաքննութիւնները, որ պիտի սկսին ներկայ 15ին բջ. օշր, և պիտի վերջանան մէկ շաբթուան մէջ:

ԱԶԳԵՐ

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մեկշիյե Հայկ. Մեծ Մրճարանին ետին



Յաճախորդները պիտի գտնեն զով ու օգուէտ տեղ մը, մաքուր սպասարկութիւն, համեղ ու պէս պէս կերակուրներ, քաղցրաւենիք, միրգեր, ըմպելիք ևն. խիստ չափաւոր գիներով:

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի կանխիկ վճարումով ու գոհացուցիչ պայմաններով:

(1) Մալթելի է որ ներկայ վերակազմութիւնը միեւնոյն անցեալի բաղդին չը հանդիպի. առանց յռեսես ըլլալու, կրնանք հաւասարապէս Աղեփանդրիոյ ու Գահիրէի լսարաններուն յարսեւութեանը կասկածիլ, քանի որ մեր ժողովուրդը դեռ հետի է դասելէ ու գնահատելէ հանրօրոս ծառայութիւնները:

Այդ լսարան-ընթերցասան ետին մեկ տարուան անցեալ մը կը պառկի, որուն վրայ մօտակայ քիւի մը մեջ պիտի գրենք՝ բնութանս անպօրէն:

Մ. Խ.

Այցելեցէ՛ք մէկ անգամ ու պիտի տեսնէք նոր ճաշարանին առաւելութիւնը:

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

ՓՈՐԱԳՐԻՉ – ՏՊԱԳՐԻՉ

Կը պատշատէ փութով ու ճաշակով ամեն տեսակ կնիքներ, դառնուի ու պղինձի վրայ. քչաք, հասանքի յիշ, արծաթ ու ոսկի մօնօկրաւներ, հաշուեցուցակ, անդէդ, այցեքարտ, հասցեքարտ, ևն: Սակարկութեան համար դիմել Հայկ. Մեծ Մրճարանը:

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapisserie)


Բաղաքիս երեւելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն. Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Մրճարանը:

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ամեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու պատրաստ, կը վաճառէ. ապրանքները մաքուր, սոկուն ու ձևաւոր. կը մրցի բոլոր օտար վաճառատանց հետ, գիններուն աժանութեան կողմէն:



ՓԻՒՆԻԿԸ կը ծախուի.

— Աղեփասնորիս. Շէրիֆ Բաշա փողոց, Անկլօ Լեփրսիէն Գրամատան քով, Տիրար Բարսեղ Թէլլալեանի խանութը:

— Գահիրէ. Ապրիւլ Ազիզ փողոց, Տիրար Կարապետ Երզնկացեանի խանութը: